ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ապրանքի ծագման տեղանուններ

Գրանցման համար 8

Հայտի համար 2014003

Հայտի ներկայացման թվականը 29.05.2014

Ծագման երկիրը GE

Հրատարկվող տեղանունը KINDZMARAULI, ԿԻՆՁՄԱՐԱՈՒԼԻ, КИНДЗМАРАУЛИ

ԱԾՄԴ-ի դասը 33

Ապրանքի տեսակը կամ կոնկրետ ապրանքը գինի

Ապրանքի հատուկ որակի նկարագրությունը՝

«Կինձմարաուլի»՝ բարձր որակի բնական կիսաքաղցր կարմիր գինի տեղանվան ծագման անունով: Գինին պատրաստվում է Սապերավի տեսակի խաղողից:

«Կինձմարաուլի» գինին բնութագրվում է մուգ նռնագույն երանգով, իսկ համը՝ ներդաշնակ, հագեցած, թավշյա, նուրբ, հաճելի քաղցր, մրգային տոներով և տեսակային բույրով:

«Կինձմարաուլի» գինու քիմիական տվյալները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

սպիրտի ծավալային պարունակությունը՝ 10,5-12,0%

շաքարի զանգվածային խտությունը՝ 30-50 գ/դմ^3

տիտրվող թթվությունը՝ 5-7գ/դմ^3

ցնդող թթուներ ՝ 1,2 գ/դմ^3

էքստրակտի զանգվածի բերված խտությունը՝ 20 գ/դմ^3 ոչ պակաս

ընդհանուր ծծմբի երկօքսիդի զանգվածային խտությունը ՝ 210 մգ/դմ^3 ոչ ավել

ազատ ծծմբի երկօքսիդի խտությունը ՝ 30 մգ/դմ^3 ոչ ավել:

Կապն աշխարհագրական ծագման հետ՝

Միկրոկլիման պայմանավորված լեռնաշղթայի ազդեցությունով, որը հարավից հարում է Կավկասիոնիի բարձր սարերին և քարավազային հողեր, որոնք ձևավորել են գետերի բերած սև թերթաքարերից (сланец): Էկոլոգիական ճկունությունը ստեղծում է քիչ թե շատ բարենպաստ պայմաններ խաղողի այգիների համար, ինչպես նաև տալիս է յուրահատուկ որակ Սապերավի տեսակի խաղողի վազին: Այս ամենն ապահովում է յուրահատուկ, բարձրակարգ, բնականից կիսաքաղցր «Քինձմառուլի» գինու յուրահատուկ համը:

Աշխարհագրական գոտին՝ «Կինձմարաուլի» խաղողագործության հատուկ գոտին գտնվում է Արևելյան Վրաստանում, Շիդա Կախեթիում, Կվարելիի վարչական շրջանում, Կավկասիոնի լեռնաշղթայի հարավային լանջին, 41°30′ հյուսիսային լայնության և 45°50′ արևելյան երկարության կոորդինատներով: Արդյունաբերական խաղողագործության այգիները հիմնականում տեղակայված են ծովի մակերևույթից 250-550մ բարձր, Ալազանի գետի ձախ ափին (շրջան): Ցածրավայրի հիմքը կազմում է Ալազանի գետահովիտը, որը հյուսիսում բարձրանում է, վերածվելով նախալեռան և միանում Կավկասիոնիի հիմքին: